

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ՝ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԵՎ ԹՈՒՐՔԵՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴ ԲԱՐՁՐԱՊԱՏԻՎ ՏԵՐ ՎԱՐԴԳԵՍ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԽԱՉ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԷՈՐԳ ԾԱՌԱՑ ՑԻՍՈՒՍԻ ԿՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ ՏԵԱՌՆ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱՋԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱՋԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱՐՈՈՅՈՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅՑ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՍԻՐԵՑԵԱԼ ՀՕՏԻՆ ՄԵՐՈՒՄ ԹԵՄԻՆ ՀԱՅՈՑ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԵՒ ԹՈՒՐՔԵՍՏԱՆԻ ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴԻ ՆՈՐԻՆ՝ ԲԱՐՁՐԱՊԱՏԻՒ ՏԷՐ ՎԱՐԴԳԷՍ ԱՒԱԳ ՔԱՀԱՆԱՅԻ ԳՐԻԳՈՐԵԱՆ՝ ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Ադրբեջանի և Թուրքեստանի հայոց թեմական և Բաքվի եկեղեցական պատվարժան խորհուրդները՝ գովաբանելով արժանապատիվ տեր Վարդգես ավագ քահանայի արժանիքները՝ միաձայն խնդրում են պարգևատրել նորան վարդապետական խաչով:

Բարձրապատիվ տեր Վարդգես ավագ քահանա Գրիգորյանը՝ Մեր հանձնարարությամբ՝ հաջողությամբ պսակել է Բաքվի հայոց եկեղեցու բարեկարգման պատասխանատու գործը: Նա հանդիսացել է նաև Բաքվի եկեղեցու վերաշինության հանձնաժողովի գործակիցն ու ղեկավարը: Այլև նկատի առնելով նորա երկարամյա անբասիր և օգտակար ծառայությունը Հայ Եկեղեցուն և հավատացյալ ժողովրդին, ինչպես նաև ներկայումս, որպես առաջնորդական փոխանորդ, նորա նվիրվածությունն ու հավատարմությունը հայ հավատացյալ ժողովրդի մեծագույն սրբության՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին, և նորա նյութական օժանդակությունը կրթական ու դաստիարակչական հաստատությանց, այլև նկատի առնելով նորա ներկա վարչական պատասխանատու պաշտոնը՝ Մենք, սույն հայրապետական կոնդակով, շնորհում ենք նորան իրավունք՝ կրելու վարդապետական խաչ, վստահելով, որ նույն եռանդով և սիրով պիտի ծառայի նա Հայ Եկեղեցուն, Հայրենիքին և Մեր հոտին:

Պատվարժան հայր Վարդգես, խաչը՝ մանավանդ վարդապետականը՝ հավատարմության և նվիրվածության խորհրդանշան է, նաև սակայն այդ ճամբան, միաժամանակ, փառքի ճամբան է, որի առաջին օրինակը մեզ տվել է

մեր Փրկիչը: Մենք հավատացած ենք, որ Դուք, ինչպես անցյալում, առավել ևս հետ այսորիկ՝ համբերատար ոգով և անդուլ ու տոկուն աշխատանքով պիտի շահեք հայ հավատացյալ ժողովրդի և հոգևոր իշխանության համակրանքը ի պատիվ Ձեր և ի մխիթարություն Մեր սիրեցյալ հոտի և Մեր: Ուստի և մաղթում ենք մարդասեր Փրկչին, որ աջակից լինի Քեզ, դժվարությունների ժամանակ, ղեկավար հանդիսանա հոգուդ՝ վառ պահելով պարտականություններիդ կատարման զգացմունքն ու գիտակցությունը և շնորհի Քեզ առողջություն ու արևշատություն, որ լինիս «մշակ առանց ամօթոյ» խղճիդ, եկեղեցուդ և հոտիդ հանդեպ:

Օրհնում ենք նաև գնահատականդ տվող և պարգևատրությանդ միջնորդ հանդիսացող թեմական և եկեղեցական խորհուրդների անդամներին և մաղթում Բարձրյալին, որ ույժ և եռանդ պարգևե նոցա՝ աջակից լինելու Քեզ, ինչպես եղել են ցարդ:

Օրհնում ենք նաև Բաքվի Մեր սիրելի ժողովրդին և մաղթում տիեզերքի Արարչին, որ կենդանի պահե նորա հավատը և վառ ու բարձր՝ նորա զգացմունքը հանդեպ Ազգի և Հայրենիքի:

Ի վերա այսր ամենայնի՝ վստահ ենք նաև, որ երկու խորհուրդներն ու հավատացյալ ժողովուրդը հախանձախնդիր կլինին տեսնելու Քեզ՝ կուրծքդ զարդարված՝ իրենց իսկ նվիրաբերած վարդապետական խաչով:

Ողջ լերուք, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն և օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ, ամէն:

Գէորգ Զ

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ
ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 10-ն յունիսի
1952 Փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ՌՆԱ,
յութերորդ ամի Հայրապետութեան Մերոյ,
ի Վանս Սրբոյ Էջմիածնի: